«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեման՝** *Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում*

**Առարկան՝** *ինֆորմատիկա*

**Հետազոտող ուսուցիչ՝** *Մարինե Խաչատրյան*

**Ուսումնական հաստատություն՝** *Արամայիս Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց*

*Երևան 2022*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գրական ակնարկ

Գլուխ 1 Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և ազեցությունը սովորողի հոգեբանական զարգացման վրա

1.1 Դպրոցահասակ երեխայի անձի զարգացման հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները_____5

1.2 Համակարգչի և համացանցի ազդեցությունը սովորողի վրա_____8

1. 3Բջջային հեռախոսի ազդեցությունը սովորողի վրա_____9

Գլուխ 2 Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները կրթության գործընթացում

2.1 Մեդիակրթական տեխնոլոգիաները դպրոցում_____11

2.2 Սովորողների հոգեբանական զարգացման վրա ՏՏ-ի դրական և բացասական ազդեցությունների գնահատում և նախազգուշացնող միջոցառումների կազմակերպում_____ _____15

Առաջարկություններ_____19

Եզրակացություն_____20

Օգտագործված գրականության ցանկ_____21

# Ներածություն

*Թեմայի արդիականությունը:* Ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաները դեռ չեն կանգնում, այժմ ՏՏ ոլորտն ամենաարագ զարգացողն է: ՏՏ ոլորտն ընդհանուր առմամբ աշխարհի տնտեսական աճի շարժիչն է : Հասարակությանը ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, կարող են հասնել ավելի մեծ սոցիալական կայունություն պետության մեջ: Այս ամենը հանգեցրել է ՏՏ-ի պահանջարկի մեծացմանն ամբողջ աշխարհում: Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական գործընթաց ներմուծելու անհրաժեշտությունը մեծ է: Ժամանակակից հասարակությունը տեղեկատվական ռեսուրսի ակտիվ օգտագործման գործընթացը բնութագրում է որպես հանրային արտադրանքը համաշխարհային տեղեկատվական ցանցի գործունեության համատեքստում, որը թույլ է տալիս մուտք գործել տեղեկատվություն՝ առանց ծավալի և էական սահմանափակումների:Մուլտիմեդիա տեխնոլոգիաների և ինտերնետի տարածումը հնարավորություն է տալիս ՏՏ-ն օգտագործել որպես հաղորդակցության, կրթության և համաշխարհային հանրությանը ինտեգրվելու միջոց: Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը զգացվում է և սովորողի անձի հոգեբանական զարգացման, նրա մասնագիտական ինքնորոշման ու ինքնակազմակերպման վրա: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Եվ կրթությունը, որպես մշակույթի համակարգում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն, բնականաբար չի կարող հեռու մնալ այս գործընթացից:

*Հետազոտության նպատակը*-զարգացնել աշակերտների կողմից նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառական հմտությունները ,նախանշել դրանց հետագա ազդեցությունները իրենց հոգեբանական զարգացման գործում:

*Հետազոտության խնդիրները.*

- ✓ Ուսումնասիրել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների տեսակները և դրանց ազդեցությունները սովորողի հոգեբանական զարգացման գործում:
- ✓ Ուսումնասիրել սովորողների անձի զարգացման հիմնական օրինաչափությունները և առանձնահատկությունները:
- ✓ Բացահայտել համակարգչների և բջջային հեռախոսների ազդեցությունը սովորողի վրա:
- ✓ Գնահատել կրթության մեջ՝ ՏՏ-ի օգտագործման դրական և բացասական կողմերը:

Վարկած1.Երեխաների ուսումնական պրոցեսում օգտագործվող ՏՀՏ տեխնոլոգիաները կարող են ազդել երեխաների հոգեբանական գործընթացների վրա:
*Հետազոտության մեթոդները.* գրականության ուսումնասիրության մեթոդներ,գնահատում,մանկավարժահոգեբանական վերլուծության մեթոդ,հարցադրում,դիտարկում:

*Հետազոտության բովանդակությունը* ՝աշխատանքը կազմված է երկու գլուխներից՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և ազեցությունը սովորողի հոգեբանական զարգացման վրա և տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները կրթության գործընթացում, առաջարկություններից ,երզակացությունից ,գրականության ցանկից:

*Աշխատանքի տեսական նշանակությունը* կարելի է կիրառել հետևյալ ոլորտներում. «Ընտանիքի հոգեբանության», «Մանկավարժության», «Ինֆորմատիկայի», «Երեխաների անհատական կամ խմբային թերապիաների ժամանակ»որպես դասախոսական և հոգեհիգիենային ուղղված նյութ,կրթական կառույցներում ՏՀՏ-տեխնոլոգիաների ճիշտ և առանց խնդրի օգտագործման համար:

# Գլուխ 1 Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները և դրանց տեսակները,ազեցությունը սովորողի հոգեբանական զարգացման վրա

## 1.1 Դպրոցահասակ երեխայի անձի զարգացման հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները

Յուրաքանչյուր տարիք ունի իրեն բնորոշ ֆիզիկական, կազմաբնախոսական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները: Տարիքային մի փուլից մյուսին անցումը կարող է լինել կտրուկ, սահուն, դանդաղ, ցավագին և այլն:

Մանկավարժության մեջ ընդունված է մարդկային կյանքի տարիքային հետևյալ շրջաբաժանումը.

- մանկություն՝ մարդու ծննդից մինչև 10 -11 տարեկան
- դեռահասություն՝ 11-12-ից մինչև 15-16 տարեկան հասակը
- պատանեկություն՝ 16-17-ից մինչև 19-21 տարեկան
- երիտասարդություն կամ վաղ հասունություն՝ 21 տարեկանից մինչև 30
- հասունություն՝ 31-ից մինչև 45 տարեկան
- միջին տարիքª 45-65 տարեկան
- տարեց կամ նախածերունականª 65-74 տարեկան
- ծերունականª 75-90 տարեկան
- երկարակյացներª 90 տարեկան և ավելի:

Դպրոցական տարիքը բաժանվում է հետևյալ երեք շրջափուլերի (նոր բաժանումը կատարվել է ըստ նոր կրթակարգի)՝

- կրտսեր դպրոցական տարիք 6-10տ.
  1-4 դաս.
- միջին դպրոցական տարիք 10-15տ.
  5-9 դաս.
- ավագ դպրոցական տարիք 15-18տ
  10-12 դաս.

**Ավագ դպրոցական տարիք.**

Վաղ պատանեկությունը, որը 15-18 տարեկանն է, համապատասխանում է հանրակրթական դպրոցի 10-12-րդ դասարաններին, ուշ պատանեկան հասակը 19/20-21/22 տարեկանն է:

Վաղ պատանեկությանը անձի ֆիզիկական զարգացման ավարտման շրջանն է: Դեռահասության շրջանի հետ համեմատած մարմնի երկարության աճը դանդաղում է, արագորեն աճում է մկանային ուժը: Ֆիզիկական զարգացումը նման է հասուն մարդու զարգացմանը, այն ընթանում է հանգիստ, համաչափ: Ուշ պատանեկան տարիքում հասակի աճը դանդաղում է, ավելանում է աշխատունակությունը: Ուղեղի կշիռը չի փոփոխվում, այլ բարդանում և փոփոխվում է ներբջջային կառուցվածքը՝ հասնելով չափահաս մարդու ուղեղի կառուցվածքին: Պատանին միջանկյալ տեղ է գրավում դեռահասի և չափահասի միջև: Մարդու մտավոր ընդհանուր ընդունակությունները 15-16 տարեկանում, որպես կանոն, արդեն ձևավորված են, և դրանց զարգացումն արդեն այնպես արագ չի ընթանում: Այնուհանդերձ մտավոր ընդունակությունները շարունակում են կատարելագործվել: Պատանուն բնորոշ է տրամաբանական մտածողությունը: Տարիքային այս փուլում է, որ առկա է ավագ դպրոցականին մասնագիտական ընտրություն կատարելուն նախապատրաստելու անհրաժեշտությունը: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը՝ բարձր դասարաններում պետք է ուժեղացնել ուսուցման անհատականացումը և հանրակրթական դպրոցի շրջանակներում որոշ չափով մասնագիտանալու հնարավորություն ստեղծել:

Ինչպես և դեռահասը, պատանին ցանկանում է իմանալ, թե ով է ինքը, որն է իր սոցիալական արժեքը, ինչի է ինքն ընդունակ: Այս տարիքում են որոշվում կենսական հեռանկարները, ձևավորվում են գիտական աշխարհայացքը, արժեքային կողմնորոշումները: Արդիականանում է ինքնահաստատման, ինքնորոշման ձգտումը:

Անձի բացառիկ կարևորություն ներկայացնող գծերից մեկը, որի հիմքը դրվում է վաղ պատանեկան տարիքում, հարգանքն է սեփական անձի նկատմամբ, որը չի կարելի նույնացնել մեծամտության կամ անքննադատականության հետ: Դա նշանակում է, որ անձն իրեն մյուսներից

վատ կամ ցածր չի դասում, այլ դրական վերաբերմունք ունի իր նկատմամբ: Ցածր ինքնահարգանքը, ընդհակառակը, ցույց է տալիս, որ անհատը դժգոհ է իրենից, արհամարհում է իրեն, վստահ չէ իր ուժերի վրա:

Վաղ պատանեկությունը աշխարհայացքի ձևավորման տեսակետից վճռորոշ շրջան է: Ակնհայտ է, որ աշխարհայացքային հիմքերը դրվում են ավելի վաղ տարիներին, սակայն բարոյական սկզբունքներն ամբողջական համակարգի վերածելու պահանջմունք առաջանում է ավագ դպրոցական տարիքում: Նման համակարգը անձին հնարավորություն կտա ոչ միայն հասկանալ շրջապատող աշխարհը, այլ գնահատել այն և որոշել նրա նկատմամբ իր վերաբերմունքը:

Տարիքային այս փուլում դպրոցը պետք է նախապատրաստի իր սաներին իրական կյանքի դժվարություններին: Դպրոցի, մասնավորապես ուսուցչի խնդիրն է օգտագործել պատանեկան հասակին ներհատուկ ճկունությունն ու կենսունակությունը՝ դժվարությունների հաղթահարմանը նախապատրաստելու համար: Այս կենսափուլում դաստիարակության առաջնահերթ նպատակն է մասնագիտական ճիշտ կողմնորոշումը, ճանաչողական ակտիվության խթանումը, ընդունակությունների և կարողությունների դրսևորման համար համապատասխան միջավայրի ստեղծումը:

---

Թորգոմյան Լ.Վ.. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, -Եր.: Տոներ, 2005, -135 էջ:

Педагогика: учебник для вузов по пед. специальностям: доп. М-вом образования и науки РФ / [Л. П. Крившенко и др.]; под ред. Л. П. Крившенко. – Москва: Проспект, 2010. – 432 с. /էջ 15-27/

Педагогика: Учебное пособие для студ. пед. учеб. зав. /В. А. Сластенин, И. Ф. Исаев, А. И. Мищенко, Е. Н. Шиянов., -8-е изд. –М.:Академия. 2008. -566с /էջ112-129/.

## 1.2 Համակարգչի և համացանցի ազդեցությունը սովորողի վրա

Ներկայում զանգվածային լրատվամիջոցներում, մասնագիտական գրականության մեջ տարածված են «ինտերնետային կախվածություն», «համակարգչային կախվածություն» եզրույթները, սակայն դրան զուգահեռ կիրառվում են նաև այլ հասկացություններ, օրինակ՝ ինտերնետի խնդրահարույց օգտագործում, ինտերնետի չարաշահում, ինտերնետային վարք, վիրտուալ կախվածություն, ինտերնետային կոմպուլսիվ վարքագիծ և այլն: Համակարգչային կախվածության թվացյալ անանունությունը նույնպես հրապուրիչ կողմ է դպրոցականների համար, ինչը նրանց թույլ է տալիս ներգրավվել այնպիսի վարքագծերում, որոնք այլապես անհասանելի են իրական կյանքում: Համացանցային հաղորդակցության ուրույն հնարավորությունները առցանց շփվողներին թույլ են տալիս սոցիալական առումով ավելի հաջողակ լինել առցանց ռեժիմում, քան առերես շփման ժամանակ[9. стр.102-109]:

Համակարգչային կախվածությունը աստիճանաբար ձևավորված վիրտուալ հիվանդություն է, որը հեռացնում է անհատի պահանջներից այն ամենը, ինչ չի վերաբերում նրա նախընտրած զբաղմունքին՝ համակարգչին:

Ըստ Բելավինի՝ համակարգչային կախվածությունը լուրջ խնդիր է, որն ունի հետևյալ նախադրյալներն ու ախտանշանները:

Երեխան սահմանված ժամանակից ավելի շատ է տրամադրում համակարգչին և համակարգչային խաղերին:

Հրաժարվում և չի կատարում կենցաղային և սեփական պարտականություններին կից աշխատանքները՝ հավաքել ննջասենյակը, դասավորել պահարանը, ճաշելուց հետո հավաքել սպասքը, և այլն:

- Երեխան համակարգչի դիմաց նստելը գերադասում է ցանկացած շփումից, ընտանեկան տոնակատարություններից և հասակակիցների հետ խաղերից:
- Նույնիսկ ճաշելիս կամ լոգանքի ժամանակ նա ակտիվ է սոցիալական էջերում:
- Երբ անջատում եք համակարգիչը, նա ինտերնետն ակտիվացնում է բջջայինի միջոցով:
- Անընդհատ ինտերնետային կայքերում ձեռք է բերում նոր ընկերներ:

- Համակարգչի դիմաց անցկացրած ժամանակն աստիճանաբար սկսում է ազդել ուսուցման, ուսումնական առաջադիմության, կենտրոնացվածության վրա:
- Երբ բացակայում է ինտերնետային կապը, երեխաները կամա-ակամա դառնում են ավելի դյուրագրգիռ և ագրեսիվ:
- Երբ չկա ինտերնետային կապը, երեխան չի կարողանում մեկ այլ գործողություն կատարել:
- Որպես կանոն, երեխայի ուշադրությունը գրավում են տեղեկատվության այնպիսի տեսակները, որոնք նա չի կարող ստանալ ծնողներից: Անբարոյականությունը, որը հեշտ հասանելի է համացանցում, ամուր և խորը կարող է նստել երեխայի գիտակցության մեջ: Համացանցային կախվածության հետևանքով վերջին տարիներին կտրուկ սկսել է նվազել գրագիտության աստիճանը: [4; *տես* 67-68]:
-

## 1. 3Բջջային հեռախոսի ազդեցությունը սովորողի վրա

Այսօր բջջային հեռախոսի դերը մարդու կյանքում դժվար է գերագնահատել: Նրա շնորհիվ դուք միշտ կարող եք կապ հաստատել արտաքին աշխարհի հետ, զանգահարել ձեր ծնողներին, ընկերներին:Ամենամեծ պատճառներից մեկը, որ ծնողները սովորաբար բջջային հեռախոսներ են գնում իրենց երեխաների համար, անվտանգությունն է: Եթե երեխաները բջջային հեռախոս ունեն իրենց հետ, շատ ավելի հեշտ է նրանց հետևել և իմանալ, որ նրանք ապահով են: Բջջային հեռախոսների շնորհիվ մենք ավելի պատասխանատու ենք դառնում: Կարող ենք օգտվել նաև հեռախոսի լրացուցիչ գործառույթներից՝ հաշվիչ, ինտերնետ, երաժշտություն, զարթուցիչ օրացույց և այլն: Ժամանակակից բջջային հեռախոսները կոմպակտ են և բազմաֆունկցիոնալ:Մինչև վերջին ժամանակները պաշտպանական հաղորդագրություններում նշվում էր, որ բջջային կապի սարքերը բացարձակապես անվնաս են դրանցից օգտվողների համար և լիովին համապատասխանում են բոլոր անհրաժեշտ չափանիշներին: Սակայն վերջին տասնամյակում առաջավոր բժշկական կենտրոններում ուսումնասիրվում է բջջային հեռախոսներից արձակվող ճառագայթների ազդեցությունը մարդկանց առողջության վրա: Օրավուր մեծանում են բջջային հեռախոսներից օգտվողների մշտական գանգատները գլխացավերից,

ականջացավերից, մաշկի գրգռումից, տեսողության խանգարումներից, գլխապտույտից և սրտխառնոցից/ https://school-science.ru /:

Բջջային հեռախոսները հատկապես վտանգավոր են երեխաների համար: Գերալդ Հայլենդը նշում է, որ դա պայմանավորված է նրանց իմունային համակարգի թերզարգացմամբ: Միաժամանակ կապ է հաստատված բջջային հեռախոսներից օգտվող մարդկանց և գլխուղեղի ուռուցքների առաջացման միջև:

Շարադրվածից հետևում է, որ բջջային հեռախոսները վտանգավոր են մարդու առողջության համար: Այդպիսի հեռախոսներով օգտվողների շրջանում ուռուցքներով հիվանդանալու հավանականությունը մեծանում է 70%-ով: Մոտավորապես 3 անգամ մեծանում է լսողական նյարդի բարորակ ուռուցքով հիվանդանալու ռիսկը, հատկապես այն ականջի կողմում, որով սովորաբար խոսում են հեռախոսով:

Դպրոցականները բջջային հեռախոսները հիմնականում օգտագործում են խաղերի և ընկերների հետ շփման համար: Ամենից հաճախ օգտվում են sms ծառայություններից և ներդրված տեսախցիկից: Դա նրանց համար խաղային սարք է, որը ինտուիտիվ կերպով օգտագործվում է մյուսների հետ կապ ստեղծելու համար, այդ թվում՝ բջջայինի միջոցով ինտերնետի օգտագործումը: Այն երեխայի մեջ վերացնում է միայնության զգացումը՝ օգնելով խուսափել սթրեսից:Այս երևույթի հետևանքներն անմիջապես ի հայտ են գալիս նաև դասարանում. նահանջ է նկատվում առավելագույն ջանքերի պահանջի դեպքում, դժվարություններ են առաջանում գիտելիքի և փորձի կապը հաստատելիս, ցրվում է ուշադրությունը, և աշակերտը սկսում է կորցնել կենտրոնանալու ունակությունը, ինչպես նաև նվազում է հետաքրքրությունը վերացական, առօրյա կյանքին չառնչվող գիտելիքների նկատմամբ և այլն: Ոմանց համար բջջային սարքավորումներն ինքնարտահայտման միջոց են: Առանց այդ առարկայի նրանք միայնություն ու դատարկություն են զգում: Ուստի, դպրոց ներում բջջային հեռախոս օգտագործելու արգելքը կարող է «լքվածության» զգացում առաջացնել, ինչի հետևանքով հատկապես դեռահասը կարող է ինքնամփոփ դառնալ ու մեկուսանալ աշխարհից:

# Գլուխ 2 Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները կրթության գործընթացում

## 2.1 Մեդիակրթական տեխնոլոգիաները դպրոցում

Արդի ժամանակահատվածում, մեդիամանկավարժության ոլորտում, ակտիվորեն իրականացվում է համաշխարհային առկա փորձի յուրացում և իմաստավորում, ինչը մեծապես պայմանավորված է մեդիակրթության զարգացման ուղիների և հեռանկարների նախանշման, ժամանակակից մարդու՝ աշխարհի հետ փոխներգործության խնդիրների լուծման հրատապությամբ: Ուստի օրինաչափ է, որ այսօր առավել հաճախ ենք անդրադառնում կրթական համակարգում գերակա համարվող այնպիսի խնդիրների, ինչպիսիք են մեդիակրթական գործունեության, կազմակերպումը, սովորողների մեդիագրագիտության, մեդիակոմպետենտության ձևավորումը:

Մեդիակրթական գործընթացում կիրառվող այս կամ այն հնարի, մեթոդի ընտրությունը պայմանավորված է լսարանի մի շարք առանձնահատկություններով՝ սովորողների պահանջմունքներով և հետաքրքրություններով, դիրքորոշումներով, մեդիատիրույթին հաղորդակից լինելու դրդապատճառներով, տեղեկատվության ընկալման մակարդակով ու պատրաստակամությամբ: Դիտարկենք մեդիակրթական պարապմունքների կազմակերպման և իրականացման մի քանի տեխնոլոգիա:

1. ***Մեդիակրթական պարապմունքների կազմակերպման մեդիադասախոսության եղանակ***– սովորողների ճանաչողական հետաքրքրությունների, ակտիվության խթանման արդյունավետ եղանակ է, որը նպաստում է մեդիակարողությունների ձևավորմանը մեդիատեղեկատվության հետ աշխատելու հմտությունների զարգացմանը: Նման դասագործընթացի կառուցվածքն ու բովանդակությունը կտրուկ տարբերվում են ավանդականից թե՛ սովորողների ներգրավվածության աստիճանով, և թե՛ նրանց կողմից իրականացվող գործողությունների բնույթով, փուլերով: Մեդիադասախոսության ընթացքում, մանկավարժի խորհրդատվությամբ և աջակցությամբ սովորողները ընտրում են, քննարկում առավել արդիական, հետաքրքրական, հրատապ հիմնախնդիր, մեդիատեղեկատվություն: Աշխատանքը կարող է լինել ինչպես խմբային, այնպես էլ անհատական:

2. ***Մեդիակրթական պարապմունքների կազմակերպման համացանցային ֆորում-քննարկումներ*** - ենթադրում է որոշակի հիմնախնդրի վերաբերյալ էլեկտրոնային նամակագրության միջոցով ծավալվող մտքերի փոխանակում: Համացանցային ֆորումները առանձնանում են իրենց դինամիկ բնույթով, հետադարձ կապի ապահովման հնարավորությամբ, տեղեկատվական լրացուցիչ աղբյուրների և ձևերի կիրառման բազմազանությամբ: Տեխնոլոգիական այս եղանակով իրականացված դասագործընթացում, տեղեկատվության համարժեք ընտրությունը, նրա լիարժեք ընկալումը, մեկնաբանումը, վերլուծումն ու ստեղծագործական կիրառումը կարևոր նախադրյալ է սովորողների քննադատական մտածողության զարգացման, մեդիատեքստերի ստեղծման, մեդիա և իրական միջավայրում ազատ հաղորդակցվելու և ստեղծագործելու համար: Մեդիակրթական պարապմունքի կազմակերպման և իրականացման այս տեխնոլոգիան իր մեջ ներառում է տեղեկատվական-հաղորդակցական, զարգացնող ուսուցման, քննադատական մտածողության զարգացման և քեյս տեխնոլոգիաները:

3. ***Մեդիակրթական պարապմունքների կազմակերպման մեդիաակումբային եղանակ***-սովորողների մեդիամշակույթի ձևավորման արտաուսումնական և ժամանցային տեխնոլոգիական եղանակ է: Մեդիաակումբային ժամանակակից պարապմունքներն ենթարկվել են արմատական փոփոխությունների, քանի որ այժմ դրանք իրականացվում են ոչ միայն թեմատիկ, վավերագրական, փաստագրական, գիտահանրամատչելի կամ ուսումնական ֆիլմերի դիտմամբ, այլ տարաբնույթ մեդիատեխնիկական միջոցների կիրառմամբ, առավել հաճախ կազմակերպվող բազմաբնույթ մեդիաարտադրանքի քննարկմամբ, մտքերի փոխանակմամբ, բանավեճերով, կինոփառատոններով, վիկտորինաներով, մրցութային ծրագրերով, ստեղծագործական նախագծերի ներկայացմամբ, իրադրային իրավիճակների բեմականացմամբ, փոխներգործուն մեթոդների կիրառմամբ:

***4.Մեդիակրթական պարապմունքների կազմակերպման ճակատային /ֆրոնտալ/ եղանակ*** -մեդիակրթական պարապմունքների ճակատային /ֆրոնտալ/ տեխնոլոգիան ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները՝

- Մեդիաստեղծագործության կառուցվածքի պատկերավոր արտացոլում, հիմնական դրվագների ներքին բովանդակության դիտարկում,
- հեղինակի մտածելակերպի տրամաբանության ընկալման փորձ,

- հեղինակի կողմից առաջադրված հայեցակարգը,
- ներկայացված մեդիաստեղծագործության միջոցով կոլեկտիվ ինքնագիտակցության ձևավորում:
- **Սովորողների մեդիագրագիտության ձևավորում և զարգացում** /իրազեկություններ հայկական կինոարտադրության, տվյալ ֆիլմի ստեղծման, ֆիլմի ռեժիսորների և ստեղծագործական խմբի այլ անդամների, ֆիլմում զբաղված դերասանների և գլխավոր դերերում հանդես եկող տաղանդավոր դերասանների, ֆիլմի նկարահանման համար օգտագործված մեդիատեխնիկայի վերաբերյալ/:
- **Հայրենասիրական և էկոլոգիական դաստիարակություն** /ֆիլմի սյուժեյի իմաստավորում, գլխավոր հերոս՝Աթանես Ղամբարյանի հզոր կերպարի գիտակցում, հայրենի բնության գեղեցկության, հայոց աշխարհի պատմա-աշխարհագրական դիրքի ընկալում և արժևորում, հայրենիքի և պետականության գաղափարի ամրապնդում/:
- **Ազգային ինքնագիտակցության և բարոյական արժեհամակարգի ձևավորում** /հայի հավաքական ուժի, միասնականության, հայ ընտանիքի ամրության, ազգային արժեքների և հայրենի բնության անվերապահ պահպանման վճռականություն/:

5. ***Մեդիակրթական պարապմունքների կազմակերպման խառնված տրամաբանական մեդիաշղթաների եղանակ***-առաջարկված մեդիատեքստի տրամաբանական շղթաների հաջորդականության կանխամտածված փոփոխություն, որի վերականգնումը հանձնարարվում է աշխատանքային խմբերի բաժանված լսարանին, նրանց մոտ քննադատական ու ստեղծագործական մտածողության, տեսապատկերային հիշողության, կամածին և ոչ կամածին ուշադրության զարգացման, մեդիատեքսի հետ աշխատելու ու անհրաժեշտության դեպքում այն վերականգնելու մեդիտեխնոլոգիական հմտությունների ձևավորման նպատակով:

6. ***Մեդիակրթական պարապմունքների կազմակերպման նախագծային և մոդելավորման եղանակ***-Մեդիակրթության ոլորտում առկա բոլոր տեխնոլոգիաների շարքում,առանցքային են համարվում ուսուցման նախագծային և մոդելավորման տեխնոլոգիաները: Նախագծային և մոդելավորման տեխնոլոգիաների գերակայությունը հիմնավորվում է այն պարզ հանգամանքով, որ յուրաքանչյուր մեդիատեքստ, այս կամ այն բնույթի մեդիաարտադրանք ինքնին մեդիանախագիծ է,

կամ մեդիանախագծի մոդելավորված հատված: Մեդիանախագծի վրա աշխատելիս մանկավարժը սովորողների համար պետք է միաժամանակ հանդիսանա թե տեղեկատվության աաղբյուր և թե իրացվող աշխատանքների համակարգող, քանզի ուսուցչի հիմնական խնդիրն է, նախագծում զբաղված յուրաքանչյուր անձին մանկավարժական աջակցության ցուցաբերումը, նրա ստեղծագործական ակտիվության խթանումն ու ստեղծարար էներգիայի կուտակումն ու արդյունավետ դրսևորումը:

## 2.2 Սովորողների հոգեբանական զարգացման վրա ՏՏ-ի դրական և բացասական ազդեցությունների գնահատում և նախազգուշացնող միջոցառումների կազմակերպում

**Հետազոտության վայրը** – Հետազոտական մասը իրականացվել է Արամայիս Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցում:

**Հետազոտվող անձանց քանակը՝** 70 աշակերտ:

**Հետազոտվող անձանց տարիքը՝** ավագ դպրոցական աշակերտներ:

**Ուսումնասիրման նպատակը** – բացահայտել ամենատարածված պատճառները, որոնք առաջացնում են դպրոցականների մոտ համակարգչային կախվածություն և ազդում նրանց հոգեկան գործընթացների վրա:

**Հետազոտության մեթոդները**

Հարցում google forms ծրագրի միջոցով/https://docs.google.com/forms/

Հարցման վերլուծություն և ընդհանրացում

Համակարգչային կախվածության ուսումնասիրման համար կիրառել ենք հարցարան (Հեղինակ՝ Խաչատուր Գասպարյան (Մխիթար Հերացու անվան ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ, դոցենտ)):

**Հետազոտության ընթացքը և արդյունքները**

Երեխաների մոտ համակարգչային կախվածության առկայությունը պարզելու համար հարցումը կիրառել ենք Խ. Գասպարյանի հարցարանը: Ստացել ենք այսպիսի արդյունքները

*Գծապատկեր 1* *Գծապատկեր 2*




*Գծապատկեր 3*




*Գծապատկեր 4*




*Գծապատկեր 5*




*Գծապատկեր 6*







- ✓ *Հարցվածների մոտ 70%- ի նշում են ,որ հաճախակի համակարգիչ կամ հեռախոս օգտագործելիս,ցանցերից օգտվելիս՝բավականություն և թեթևություն զգացողություն են ունենում ,կտրվումեն իրենց առօրյայից,ակտիվանում են:Մնացած 22%-ի մոտ այդ զգացողությունները մշտապես են,իսկ 8%-ը երբեք չեն զգացել վերը թվարկվածները:*
- ✓ *Հարցվածների 51%-ը նշում է ,որ մշտապես ինքնուրույն է դադարեցնում հեռախոսի կամ համակարգչի աշխատանքը և ցանցից դուրս գալիս ,նրանց մոտ կամային որակները բարձր են:41%-ը դադարեցնում է հաճախակի,բայց ոչ հեշտությամբ,իսկ 8% –ը դժվարանում է դադարեցնել աշխատանքը և չի կարողանում կտրվել ցանցից:*
- ✓ *Հարցվածների 89%–ը նշում է,որ առանց համակարգչի և հեռախոսի օգտագործման կախված իրավիճակից ունենում է դատարկության զգացողություն ,լինում են տխուր և նյարդային:Մյուս 7%–ը նշել է ,որ միշտ է ունենում նման զգացողություններ առանց ցանցի օգտագործման, իսկ 4%-ը հաճախակի:*

- ✓ *Պատասխանելով այն հարցին ,թե որքան հաճախ են կարիք ունենում ցանցից օգտվելու ՝տրամադրությունը բարերավելու և դժվարություններից խուսափելու համար՝հարցվածների 60%-ը նշում է,որ պահանջ չի ունենում, 27-ը հաճախակի է ունենում,իսկ 11%–ը մշտապես :*
- ✓ *Հարցվածների 78%–ը նշում է ,որ ցացից օգտվելու պատճառով չեն խուսափում ՝ընտանեկան,հասարակական,աշխատանքային պարտականություններից,19%-ը պարբերաբար խուսափում են,իսկ 4%–ը մշտապես:*
- ✓ *Պատասխանելով այն հարցին,թե որքան հաճախ են ստում հեռախոսի կամ համակարգչի դիմաց անցկացրած ժամանակի մասին ,հարցվածների 98%–ը պատասխանել է ստում են կախված իրավիճակից, մնացած 2% –ը հաճախակի:*

*Ըստ հարցումի գնահատեցինք առաջացած բացասական հետևանքների տոկոսային հարաբերությունը տվյալ տարիքային խմբում:*

*60-ից 100%- չկա վտանգ ,ազդեցությունը մեծ չէ*

*30-ից 50%- առկա է որոշակի վտանգ*

*10-ից 20%-վտանգը մեծ չէ*




*Ավագ դպրոցի տարիքի սովորողների այս խմբի 63%–ից ավելի մոտ SS-ի բացասական ազդեցությունը մեծ չէ և կախվածության մակարդակը ցածր է,31% -ի մոտ առկա է որոշակի ռիսկեր և պետք է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ,իսկ 6% –ի մոտ վտանգը առկա է և ազդեցությունը բավականին մեծ:*

# Առաջարկություններ

Կատարված հետազոտության արդյունքների մշակումից հետո կարող ենք կատարել մի քանի առաջարկ.

1. Սովորողների հոգեբանական գործընթացների վրա ՏՏ-ի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ կազմակերպել քարոզչական միջոցառումներ,նախազգուշացնելով բջջային հեռախոսների ոչ գրագետ օգտագործման հետևանքների մասին:
2. Ուշադրություն դարձնել նրա զարգացման վրա՝ հոգեկան և ֆիզիոլոգիական: Խուսափելու համար նրա տարիքային զարգացման հապաղումից:
3. Սովորողների շրջանում հաճախ կատարել՝ դիտարկումներ,անցկացնել թեստեր և հարցումներ, պարզելու՝ ՏՏ-ի ազդեցությունների մակարդակը,որևէ հոգեբանական գործընթացի վրա:
4. Կազմակերպել մեդիագրագիտության դասեր սովորողների և նրանց ծնողների համար ՝ինֆորմատիկա առարկայից:

## Եզրակացություն

Վերոգրյալից պարզ դարձավ.

- Ավագ դպրոցականների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ նրանց մոտ ՏՏ-ի ոչ գրագետ օգտագործումը հանգեցնում է հոգեբանական և ֆիզիկական հապաղումների, կախվածության,սովորողները ունենում են շատ ավելի թույլ ֆիզիկական ու հոգեկան առողջություն, քան իրենց շրջապատող մեծահասակները:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում դրական ներգործություն է ունենում սովորողների զարգացման և կրթության գործում: Այն ծառայում է որպես գիտելիքների համալրման, տեղեկատվության միջոց, մեդիագրագիտության կանոներով առաջնորդվելու դեպքում:
- Մեդիակրթական տեխնոլոգիաների օգտագործումը դպրոցում,կբերի ՏՏ-ի բացասական ազդեցության կրճատմանը սովորողների հոգեբանական զարգացման վրա:
- Ավագ դպրոցի տարիքի հետազոտվածների 63%–ից ավելի մոտ ՏՏ-ի բացասական ազդեցությունը կապված՝հոգեբանական զարգացման հետ ,մեծ չէ և կախվածության մակարդակը ցածր է,31% -ի մոտ առկա է որոշակի ռիսկեր և պետք է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ,իսկ 6% –ի մոտ վտանգը առկա է և ազդեցությունը բավականին մեծ:

# Օգտագործված գրականության ցանկ


1. Բալյան Ա.Ա «Մանկավարժական հոգեբանության հարցեր» -Երևան: Լույս, 1983
2. Թադևոսյան Հ.Վ., Սոցիալական մանկավարժություն: Մեթոդական ձեռնարկ:-Եր., 2002,
3. Խուդոյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան, 2004,:
4. Մեթոդական ձեռնարկ « Դեռահասների առողջություն և զարգացում» Երևան 2014
5. Ն.Կարապետյան. Հոդված/ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ/-Եր.-2018թ.
6. Ն.Կարապետյան. Հոդված/ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ/Եր.-2014թ
7. Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն: -Եր., 1974, էջ 27
8. Վ. Մանտուլենկո « Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»
9. психологии, 1995, № 3.
10. Юсуф Ибрахим Ахмед Чатовая зависимость как психосоциальная проблема, М., 1994, с. 34.
11. Walther J.B. Computer-mediated communication: Impersonal, interpersonal, and hyperpersonal interaction. Communication Research 1996, p. 43.
12. Young K.S., 2007. Cognitive-behavioral therapy with Internet addicts£ Treatment outcomes and implications, CyberPsychology & Behavior, 10(5), 671–679.
13. https://muegn.ru/hy/fire-trucks/problemy-ispolzovaniya-novyh-tehnologii-v-obrazovanii-nauchno-metodicheskie.html
14. https://docs.google.com/forms